ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա. Բ. Գ. Դ. 1912[1])

(Вѣдомость А. Б. В. Г.)

Գ Շամախու թեմ.

1. Բագու Նահանգի Բագու քաղաքը ունի 4 եկ., 11 քահ., 46483 արական ծխական և 39991 իգական ծխական. բոլորը 86474 ծխ. արականը իգականից շատ է 6492-ով։ 4 եկեղեցին միասին ունեն գրամագլուխ 42745 ռուբ. անշարժ կայքերից տարեկան եկամուտ 2932 ռ. 50 կոպ. տարեկան ելք 37199 ռ.։ Բաղուն ունի 2 ծխ. դպրոց, որտեղ սովորում են 188 տղայ և 305 աղջիկ, բոլորը 493 սովորող. ուսուցիչների թիւն է 25[2])։

2. Շամախու գաւառի Շամախի քաղաքում—1 եկ. 1 արքեպ. 2 քահ. 2226 ար. ծխակ. և 2158 իգ. ծխակ. բոլորը 4384 ծխ. արականը իգականից աւելի է 68-ով։ 1 եկեղեցին ունի դրամագլուխ 5238 ռ. 1 կոպ. տարեկան եկամուտ 743 ռ. 63 կոպ. ելք 796 ռ. 42 կոպ։ Կայ մի ծխական դպրոց՝ 4 ուսուցչով և 96 սովորողներով, որից 44 տղայ, 55 աղջիկ։

3. Շամախու գաւառի 23 գիւղը ունի 13 եկեղեցի 10 քահանայ. 9546 ար. ծխական և 8723 իգ. ծխ. բոլորը 18249 ծխ. արականը իգականից աւելի է 823-ով։ 13 եկեղեցին միասին ունեն գրամագլուխ 8712 ռ. 80 կոպ. անշարժ կայքերից տարեկան եկամուտ 944 ռ. 37 կոպ. ելք 1139 ռ. 97 կ։ Կայ 4 ծխական դպրոց 17 ուսուցչով. սովորողների թիւն է 461. որից 344-ը տղայ, իսկ 117-ը աղջիկ։

4. Գեոկչայի գաւառի 21 գիւղը ունի 17 եկեղ. 17 քահ. 10926 ար. ծխ. և 9675 իգ. ծխ. բոլորը 20601 ծխ. արականը

---

1) Տես, «Արարատ» 1914 թ. № 5։

2) Երևանի եւ Թիֆլիսի թեմի վիճակագրութիւնը տալով անցեալ անգամ մենք չէինք բերել ծխական դպրոցների ստատիստիկան, որովհետեւ տեղեկագրի մէջ ոչ մի յիշատակութիւն չկար. թէ այս ինչ քաղաքը կամ գիւղը ունի՞ արդեօք ծխական դպրոց։ Որովհետեւ մեր ձեռքում եղած տեղեկագրի (Вѣдомость) մէջ կայ վիճակագրական տեղեկութիւն Շամախու. Ղարաբաղի թեմերում եղած ծխական դպրոցների մասին. ուստի եւ ցանկալի համարեցինք այդ տեղեկութեանց ամփոփումն էլ դնել մեր ընթերցողների առաջ, նայած որ ծխական դպրոցների մանրամասն եւ ընդարձակ վիճակագրութիւնը ստանում է նաեւ «Էջմիածնի Ուսումնական Խորհուրդը»։

իգականից շատ է 1251-ով: 17 եկեղեցու դրամագլուխ է 8260 ռ. 74 կոպ. անշարժ կալքերից ստացած եկամուտը 536 ռ. 88 կ. ելքը 1559 ռ.: Կայ 4 ծխական դպրոց 6 ուսուցչով. սովորողներով թիւն է 281. որից տղայ 226. աղջիկ՝ 55:

5. Ղուբա քաղաքում—1 *եկ. 1 քահ.* 434 *ար. և* 487 *իգ. ծխական. բոլորը* 921 *ծխ. այստեղ ևս գիտելի բացառութեամբ իգականների թիւն աւելի է 53-ով: 1 եկեղեցին ունի դրամագլուխ* 14684 *ռ.* 1 *կոպ. մուտք անշարժ կալքերից* 628 *ռ.* 58 *կոպ. ելք* 658 *ռ. ելք* 658 *ռ.* 9 *կոպ: Ունի 1 ծխակ. դպրոց 3 ուսուցչով և 42 աշակերտով, որից 25 տղայ, 17 աղջիկ:*

6. Ղուբա գաւառի 2 հայաբնակ գիւղում—2 *եկեղ.* 2 *քահ.* 485 *ար. և* 390 *իգ. ծխական. բոլորը* 875 *ծխական. արականը աւելի է իգականից 95-ով: 2 եկեղեցու դրամագլուխ է* 159 *ռ.* 48 *կ. մուտքը՝* 96 *ռ.* 43 *կոպ. ելքը՝* 80 *ռ.* 80 *կոպ: Ունին մի ծխական դպրոց, 2 ուսուցիչ, 29 սովորող, որից 24 տղայ, իսկ 5-ը աղջիկ:*

7. Դերբենդ քաղաքը ունի 1 *եկ.* 2 *քահ.* 350 *ար. և* 508 *իգ. ծխական. բոլորը* 858 *ծխ. այստեղ էլ իգականը աւելի է արականից 158-ով: Եկեղեցին ունի դրամագլուխ* 5218 *ռ.* 18 *կոպ. անշարժ կալքերից ստացած եկամուտ* 1634 *ռ.* 20 *կոպ. ելք* 1463 *ռ.* 81 *կոպ: Քաղաքը ունի 1 ծխ. դպրոց, 4 ուսուցիչ և 74 սովորող, որից 24 տղայ, իսկ 50-ը աղջիկ:*

8. Գեօկչա աւանը *ունի եկեղ.(?) եկեղեցու փոխարէն կայ մի աղօթատուն. 1 քահ.* 214 *ար. ծխ. և* 173 *իգ. ծխ. բոլորը* 378 *ծխ. արականը աւելի է իգականից 39-ով: Դրամագլուխ աղօթատան է* 577 *ռ.* 4 *կոպ: տարեկան եկամուտ* 203 *ռ.* 40 *կ. ելք* 140 *ռ.* 17 *կոպ: Դպրոց չունի:*

9. Սալեան աւանում—*եկեղ. (?) 1 քահ.* 65 *ար. ծխ. և* 47 *իգ. ծխ. բոլորը* 112 *ծխ. արականը շատ է իգականից 18-ով: Դպրոց չունի:*

Ամբողջ Շամախու թեմում

Այսպէս ուրեմն. Շամախու թեմի քաղաքային եկեղեցիների թիւն է 8 (Գեօկչա աւանում եղած աղօթատունն էլ հաշուած), գիւղական եկեղ. թիւը՝ 32, բոլորը 40 եկ. գիւղական քահ. թիւն է 29, քաղաքային քահանաների 18-ը, բոլորը 47 քահ: Շամախու թեմի 6 քաղաքների բնակչութեան թիւը է 49772 ար. և 43364 իգ. ծխ. բոլորը 93136 ծխակ. արականը աւելի է իգականից 6408-ով: Քաղաքները հետևեալներն են՝ 1) Բագու, 2) Շամախի, 3) Ղուբա, 4) Դերբենդ, 5) Գեօկչա և 6) Սալեան

աւանները։ Թեմի 45 գիւղում ծխականների թիւն է 20957 աբ. և 18788 կգ. բոլորը 39745 ծխ. արականը շատ է իգականից 2169-ով։ Քաղաքաքնակ և գիւղաքնակ արական ծխականների թիւն է 70729 ծխ. իսկ իգ. 62152 ծխ. բոլորը 132881 ծխակ. արականը իգականից աւելի է 8577-ով։ Քաղաքային իւրաքանչիւր եկեղեցուն միջին թւով ընկնում է 11645 ծխ. իսկ քաղաքային իւրաքանչիւր քահանայ ունի 5174 ծխական։ Գիւղական իւրաքանչիւր եկեղեցուն ընկնում է միջին թւով 1242 ծխակ. իսկ գիւղական մի քահանան ունի միջին թւով 1401 ծխակ.։ Ընդհանրապէս թեմի մի եկեղեցուն միջին թւով ընկնում է 3322 ծխ. և մի քահանան ունի միջին թւով 2827 ծխական։ Քաղաքային 8 եկեղեցիներն միասին ունեն դրամագլուխ 68462 ռ. 24 կոպ. անշարժ կայքերից եկամուտ՝ 30905 ռ. 11 կոպ. եւ՝ 38793 ռ. 68 կ։ Մի եկեղեցուն միջին թւով ընկնում է դրամագլուխ 8557 ռ. 78 կ. եկամուտ՝ 3875 ռ. 64 կ. եւ՝ 4849 ռ. 21 կ։ Գիւղական 32 եկեղ. դրամագլուխն է 17133 ռ. 2 կոպ. մուտքը՝ 1376 ռ. 94 կոպ. եւը՝ 2779 ռ. 77 կոպ.։ Մի գիւղական եկ. միջին թւով ընկնում է դրամագլուխ 535 ռ. 40 կոպ. մուտք՝ 43 ռ. 3 կ. եւ՝ 86 ռ. 86 կ.։ Թէ քաղաքային (8) և թէ գիւղական (32) եկեղ. (40) դրամագլուխն է 85595 ռ. 26 կոպ. մուտքը անշարժ կայքերից՝ 32282 ռ. 5 կոպ. եւը՝ 41573 ռ. 45 կոպ.։ Միջին թւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ 2139 ռ. 88 կոպ. մուտք՝ 807 ռ. 5 կոպ. և եւ՝ 1039 ռ. 33 կոպ. Թեմում կայ մի արքեպիսկոպոս։ Քաղաքներում կայ 5 ծխական դպրոց, 36 ուսուցչով և 708 սովորողներով, որից 427-ը աղջիկ, իսկ 281 տղայ։ (Ինչպէս տեսնում է ընթերցողը, քաղաքներում իգական սեռը աւելի շատ թւով աշակերտութիւն է տալիս արական սեռից, այսպէս իգականը շատ է արականից 246-ով. այս երևոյթը նկատելի է ամեն տեղ և ունի իր բացատրութիւնը, որի մասին ուրիշ անդամ առիթ կունենանք խօսելու)։ Գիւղերում կայ 9 ծխական դպրոց 25 ուսուցչով և 771 սովորողներով, որից 594 տղայ, իսկ 177 աղջիկ։ (Ընթերցողը տեսնում է այստեղ միանգամայն հակառակը. քաղաքներում սովորողների իգականն է զգալիապէս գերակշռում, իսկ գիւղերում՝ արականը. այսպէս գիւղերում արականը շատ է իգականից 417-ով. այս երևոյթն էլ դարձեալ իր որոշ բացատրութիւնն ունի)։ Ուրեմն, թեմում եղած բոլոր ծխական դպրոցների թիւն է 14, 61 ուսուցչով և 1479 աշակերտներ—աշակերտուհիներով, որից տղայ՝ 875, իսկ աղջիկ՝ 604։